

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

XI – դասարան

1. Ամեն անգամ, երբ երկյուղածությամբ ու սիրով մտնում ենք «մեր նոր քերթության անհաս Արարատի» աշխարհը, համակվում ենք մարդու և աշխարհի ճանաչման մի անըմբռելի դողով: Այդ աշխարհում կա հրաշքի մեծարում ու աշխարհի զվարթ ու լուսավոր աղբյուրների փառաբանում, մարդու պանծացում, ազգային ողբերգություն, հայրենասիրություն, տառապանք ու ցասում և ամենակարևորը՝ մարդասիրություն: Աշխարհի անծայրածիր գեղեցկության ու մարդու հզորության Թումանյանական հայացքի բարձր կետը գրականագետ Լևոն Հախվերդյանը համարել է «Անուշ»-ը՝ մեր ազգային սիրավեպը:

«Անուշ»-ը Թումանյանը մշակել ու վերջնական տեսքի է բերել 1902-ին, Աբասթումանի փառահեղ աշնանը, որը իրավամբ համեմատվում է Պուշկինի «բոլդիկյան աշուն»-ի հետ, «Անուշը» արվեստի գլուխգործոց է: Ոչ մի երկում այնքան հրաշալի չեն արտացոլված մեր ժողովրդի հոգևոր գեղեցկությունները, որքան այս հանճարեղ պոեմում: Պոեմում գրեթե չկան «երկրորդական» կերպարներ: Բոլորն են գլխավոր՝ և՛ Սարոն, և՛ Անուշը, և՛ Մոսին, և՛ Սարոյի մայրը, և՛ ժողովուրդը, բոլորը:

Գեղարվեստական հզոր ընդհանրացում է Սարոյի մոր կերպարը. Նա վշտի, բողոքի, ցասման ու անարդարության քարացած պատկեր է:

Անուշի ու Սարոյի գեղեցիկ սերը դատապարտված է, նրանք մերժվել են Անուշի ընտանիքից, փախել են սարերը, բայց չեն կարող վայելել իրենց անարատ սերը, քանի որ, «օրհասն առաջին, գնդակն ետևից, հանդերը՝ դրժոխք, ընկերը՝ դուշման», հալածված է Սարոն:

Մինչ Սարոյի մոր կերպարին հանդիպելը, մենք ներկա ենք Մանիշակի երազի չարագուշակ մեկնաբանությանը: Գարի զցող Վարդիշաղը տեսնում է Սարոյի՝ «սև ճամփա ընկնելը», և մենք լսում ենք նրա աղոթք-մորմոքը՝

Աստված խընայի ջահել-ջիվանին,
Աստված խընայի իր անբախտ նանին...

Ապա մենք տեսնում ենք Սարոյի թաղման հզոր պատկերը, նրա ողբացող նանին, որ ասես եկել է հին դարերից, լայաց երգերից և ժողովրդական ոճի վսեմ պարզությամբ ողբում է «որբ ու անչորան» մնացած սարերի տիրակալի ողբերգական մահը: Նա հանդուգն անեծքով ծառս է լինում «դուշման երկնքի դիմաց», անսահման վշտի մեջ հայտնված սնտոխապաշտ ու աստվածավախ մայրը զայրույթով բողոքում է Աստծու դեմ, իր գերեզմանը խլող որդուն անիծում՝ «դավաճա՛ն որդի, թշնամի՛ որդի», բայց դավաճանն ու թշնամին այստեղ Երկինքն է, անիրավ կյանքն է:

Մենք լսում ենք Սարոյի մոր ողբը, նա մարմնացյալ վիշտ է , չի նկատում իրեն շրջապատող սգավոր կանանց, նա որդուց պատասխան է պահանջում, թե ինչի իլեց իր գերեզմանը: Նա այլևս չի ապրում, որովհետև որդին էր նրա շունչը, կյանքը, արևը, իսկ հիմա՝

Մենակ մի հոգի անգուսպ կատաղած՝
Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
Մեռած չորանի պառավ նանն է նա՝
Ցավից խելագար բառաչում, լալիս...

Սգավոր կանայք ողբում են, որ Սարոյի ոչխարը անտեր է մնացել, անեծքով հիշում են նրա «անտեր մնացած խեղճ յարի մասին», բայց ցնցում է այն դաժան միտքը, որ «Որ զով սարերի սովորած նանը, էլ սար չի գնա առանց Սարոյի»: Սակայն ցավից խելագար նանը անտարբեր է նրանց ողբին, նա աղաչում է իր մեռած որդուն՝ մի անգամ խոսի, աչքը բաց անի...

Բայց ...«Արևս հանգավ , Սարո ջա՛ն,
Գիշերս ընկավ, Սարո ջա՛ն...»

Ու մենք թաթախվում ենք այս ողբի մեջ՝ հասկանալով, որ մայրական սերն ու վիշտը հավերժական են: Ժողովրդական ոճի վսեմ պարզություն: Այս ողբը ողբերգության թեման և ճակատագրի թեման ընդհանրացնող մի «վսեմ շարական է», որ բացում է ժողովրդական մտածողության խոր շերտերը:

Մեր բանաստեղծներից շատերն են անդրադարձել մայրական սիրո թեմային, մոր կերպարին, բայց ոչ ոք չի ներկայացրել ողբացող մոր կերպարը:

Շիրազը հուշարձան է կանգնեցրել իր մորը՝ նրա կերպարում մարմնավորելով աշխարհի բոլոր մայրերին՝

«մեր ճորտն ու տերն է մայրս»

«մեր տան Աստվածն է մայրս»

Չարենցը նկարագրել է իր պանդուխտ որդուն սպասող մորը, որ սպասումից սմբել է և՛ «արցունքներ դառնաղի, ահա ընկնում են մեկ մեկ, քո ձեռքերի վրա ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին»:

Սևակը նկարագրել է իր մորը, նրա արարող ձեռքերը՝ պսակվելիս պարող, որդու համար տան պոռն դարձող , թոռանը պահող-փայփայող, «լվացք անող, խմոր հունցող, փոշի սրբող» մաշված ու կոշտացած սուրբ ձեռքերը:

Իսահակյանը ցանկանում է «երազ լինել ու՝ «թոնիլ մտող, մայրի՛կ ջան», «Ա՛խ քո տեսքին, անուշ լեզվին կարոտցել եմ , մայրի՛կ ջան»:

Տերյանը հիշողությամբ այցելում է մորը, լսում նրա պարզկա լեզուն, տեսնում մատները մաշված ու բարակ, մանկանում է նորից, գլուխը հենում մոր ծնկին և անվերջ լսում նրա օրորող հեքիաթը...

Կապուտիկյանի համար ցավ է, որ հոր վաղաժամ մահվամբ շուտ թառամեց իր մոր կյանքի զարունը. Նրա գարունը շարունակվեց... Միակ դասեր ու թոռնիկի՝ Արա Շիրազի կյանքով:

Բոլոր մայրերը կեցության հզոր ծառն են, իսկ Սարոյի նանը նաև մոր կերպարի մարմնացյալ վիշտն է, որդեկորույս մայրերի կենդանի հուշարձանը:

2. Ներքոհիշյալ հաստիքների հեղինակները եղեռնագարկ գրողներ են՝ Գրիգոր Զոհրապ՝ Նորավեպի իշխանը, Դանիել Վարուժան՝ գրական ֆիդայի, ցեղի շեփորահար, Միամանթո՝ առնական խիզախություն փողհար, նոր շրջանի Նարեկացի, նոր դարերի մարգարե:

Նրանք բոլորն էլ ծնվել և ապրել են Արևմտյան Հայաստանում, ծառայել են իրենց ժողովրդին, տեսել են այդ ժողովրդի կեղեքումն ու կոտորածը. Նրանք կարող էին հեռանալ Պոլսից, կարող էին փրկվել, բայց մնացին և առաջինը սրածվեցին. Նրանք շեփորեցին իրենց ցեղի հրաշալի հատկությունները, հնչեցրին նրանց պայքարի երգը, ուզեցան «երգելով մեռնիլ», այդ իսկ պատճառով քշվեցին անապատներ և վայրենի բարբարոսների ձեռքով քառատվեցին, քարագարկ եղան, իսկ թուրքական մեջլիսի պատգամավոր Զոհրապը խիզախորեն Թալեաթի երեսին շարտեց, որ «Օր մը, ապահով եղեք, որ հաշիվ պիտի պահանջվի ձեզմե, և դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները»: Այս խոսքերն էլ եղան նրա դատավճիռը:

Մինչ օրս թուրքը չի կարողանում արդարացնել իր գործած ոճիրը, աշխարհը ամեն օր խոսում է հայոց ցեղասպանության մասին և պահանջում Թուրքիայից՝ ընդունել իր գործած ոճիրը:

«Կինը ծիծաղ մըն է . պետք չէ, որ լացի փոխվի» Զոհրապ «Երջանիկ մահը»
«Եկու՛ր, որոյա՛կ, հայրենի տունդ շենցու՛ր», Վարուժան «Կարոտի նամակ»,
«Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...»: Միամանթո «Մահվան տեսիլք»:

Մեր սրածված գրողների հետ մենք պիտի հնչեցնենք «Հացին երգը»՝ ապացուցելու «մարդակեր գազանին», որ «Խաչվածին մահ չկա», և «բարբա-րոսներ շատ կգան ու կանցնեն անհետ, արքայական խոսքը կմնա հավետ»:

«Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը՝ վառ հոգած...», և մեր բոլոր նահա տակները երկնքից տեսնելու են այդ արշալույսը:

3. 1910-ական թվականներին Տերյանի պոեզիան հարստանում է հայրենիքի բախտն ու ճակատագիրը վերծանող երգերով: Պատճառը այն աղետալի դեպքերն էին, որ ճակատագրական եղան մեր ժողովրդի համար:

Նա գրեց «Երկիր Նաիրի» շարքը, որտեղ ամփոփված են «Որպես Լաերտի որդին», «Այնպես անխինդ են և նման լացի», «Իջնում է գիշերն անգութ ու մթին», «Հայրենիքում իմ արնաներկ», «Դու հպարտ չես իմ հայրենիք», «Մշուշի միջից,-տեսի՛լ դյութավան», «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Մի՞ թե վերջին պոետն եմ ես...» և այլն:

Իր շարքը վերնագրելով «Երկիր Նաիրի»՝ Տերյանը գրել է.«Նաիրի» պետք է հասկանալ ոչ թե պատմական, այլ իդեական իմաստով:

Շարքը բաղկացած է 14 բանաստեղծությունից: Այն վերջանում է «Բարակիբրան նաիրուհին ինձ ժպտաց» բանաստեղծությամբ:

«Այդպես արևն է դուրս նայում մութ ամպից իմ Նաիրյան բա՛րձր, բա՛րձր աշխարհում»: Շարքն սկսվում է 1913-ին գրված «Որպես Լաերտի որդին» բանաստեղծությամբ, որտեղ Տերյանն իրեն համեմատում է Ուլիսի (Ոդիսևսի) հետ. ինքն էլ հին Հունաստանի առասպելական հերոսի նման մերժում է «սիրենների

կանչող երգը», հաղթահարում է շատ դժվարություններ, և ցուրտ հեռուներում անխնդրում բախտ որոնող բանաստեղծը վերադառնում է հայրենի երկիր.

Ու կարոտակեզ ահա կրկին
Վերադառնում եմ , որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին երգին,
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ..

Եղիշե Չարենցը Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը անվանել է «Նաիրյան խոսքերի թանգարան», մի այլ տեղ «երգերի սուրբ թանգարան»:

Շարքին բնաբան է դրված Լերմոնտովի «Родина» բանաստեղծության 1-ին տողը՝
«Люблю отчизну я, но странною любовью»:

4. Հարդագողի ճամփորդը, Նաիրյան երկրի իմաստուն գավակը՝ Եղիշե Չարենցը, իր «Պատգամ» բանաստեղծությունը գրել է 1933-ի մայիսի 9-ին. Այն գետեղված է «Գիրք ճանապարհի» ժողովածուում:

Այս բանաստեղծությունը արտաքուստ խանդավառ տրամադրություն թողնելու պատրանք է ստեղծում՝ «նոր լույս», «հրե ճառագայթով ոսկյա» արև, լույսն ու արևը բոցավառողի մասին ճարտասանական հարցում: Բայց այս գեղեցիկ քողի տակ նա խորքում ուրվագծում է սեփական ժողովրդի ճակատագիրը:

Չարենցը փառաբանում է նոր հաղթանակը, որը լվանում է հիմա «վառվող ոգին մեր անմահ»: Սակայն կա բուն ասելիքը՝ քողարկված լույսի խրախճանքում՝ «Խոր գերության ընդերքում » , «հիմարության համերգում», «իմաստության գետակի» հոսքը չէր կրում հու՛ր այգաբացն այս հեռու՝ հնուց պահած իր ջրում:

1930-ականներին Չարենցը չէր կարող իր ասելիքը բարձրաձայնել հրապարակավ, ազգային ամեն բառ ու հնչյուն դատապարտված էր տանջանքի, դավաճանի խարանի: Եվ հանճարեղ Չարենցը խորովվում էր հենց դրա մեջ, ուստի իր խոսքը սերունդներին ժառանգեց գաղտնագրով: Բանաստեղծության երկրորդ տողերի վերից վար իջնող շղթայակապով նա ամենքին ի լուր ավետեց. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է », իսկ հավաքական ուժը ժողովրդի և ղեկավարի , մայր հայրենիքի և սփյուռքի, անցյալի ու ներկայի միահյուսումն է: Այն տարիներին անցյալը հիշելն անգամ քաղաքական հանցանք էր, իսկ Չարենցը համախմբման պատգամներ է հղում: Այս տողի գաղտնագիրը բացվել է «Գիրք ճանապարհի» երկրորդ տարբերակի տպագրությունից հետո (1934 օգոստոս) և որպես քաղաքական մեղադրանք ուղղվել բանաստեղծին:

Իհարկե՛ , արդիական է, մենք այսօր , առավել քան երբևէ, կարիք ունենք միաբանվելու, ներելու, միասին կերտելու մեր ապագան, սիրելու մեր չքնաղ հայրենիքը, արժևորելու նրա մտավորականին, գյուղացուն, զինվորին, առաջնորդին: